

## ԶԵԿՈՅՑ

## ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՍՆԱՐԿՈՒԹԵԱՆ

## Ս. ԹԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՀԱՐԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Վարչ. Խորհուրդը որոշեց զրամական յատկացում մը կատարել ի նպաստ Ս. Թարութեան Տաճարին վերանորոգութեան ծախքերուն:

Ս. Թարութեան Տաճարը, որ է Քրիստոսի Դամբարանը, Քրիստոնէութեան ամենէն արագան վայրն է եւ կը ներկայացնէ Քրիստոնեայ աշխարհին ամենէն հին յիշատակարաններէն մէկը, եթէ ոչ ամենահինը: Այս եզական կոթողը ներկայիս կը գտնուի փլուզումի վտանգին տակ: Բազմաթիւ մասնազէտներու յաջորդական տեղեկագիրները երեւան կը հանեն այս անմիջական վտանգը եւ ազդու կոչ մը կը կատարեն անհրաժեշտ միջոցները ձեռք առնելու:

Վարչ. Խորհուրդն այնպէս նկատի ունեցաւ, սոյն որոշումը տալով, այն սրտագին եւ երկիւղած զգացումը որով տողորում էր մեր Հիմնադիրը՝ Գալուստ Կիւլպէնկեան, հանդէպ Ս. Տեղեաց: Հիմնարկութեան Վարչ. Խորհուրդը որ կը ջանայ մեկնել եւ գործադրել իր Հիմնադրին կամքը եւ բաղձանքները, վստահ է թէ մեծանուն Բարերարին սրտին մօտիկ գործ մը կը կատարէ իր օժանդակութիւնը բերելով Սուրբ Գերեզմանին պահպանման նպատակին:

Ծանօթ է որ Կաթողիկէ, Օրթոտոքս եւ Հայ երեք Համայնքները Ս. Թարութեան Տաճարին հսկողութեան եւ պաշտպանութեան առանձնաշնորհումը ունին, իրենց պատրիարքարաններուն եւ կրօնական հաստատութիւններուն միջոցաւ: Այդ առանձնաշնորհումը հաւասարապէս բաժնուած է երեք Համայնքներուն միջեւ եւ ճանչցուած է միջազգային դաշնագիրներով, ինչպէս ընդունուած է Ս. Տեղեաց վրայ յաջորդաբար տիրող աշխարհիկ իշխանութեանց կողմէ:

Հետեւաբար այս Համայնքները պարտականութիւնը ունին վերանորոգութեան գործին նախաձեռնութիւնը առնելու. իրենց պատասխանատւութեան տակ, եւ զայն գլուխ հանելու, առանց որու կրնայ խնդրոյ առարկայ դառնալ այս գերագոյն առանձնաշնորհումը որ ընծայուած է իրենց: Վերանորոգութիւնը կը կարօտի կարեւոր գումարի մը որ կը հասնի 900,000 անգլ. ոսկիի, ըստ երեք կրօնական Համայնքներուն կողմէ նշանակուած ճարտարապետներուն յանձնախումբին գնահատութեան:

300,000 անգլ. ոսկիի բաժինը որ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին կ'իյնայ ստանձնել՝ անշուշտ ծանր բեռ մըն է այս վերջնոյն համար: Այսպէս է որ Հիմնարկութեան Վարչ. Խորհուրդը որոշեց հոգալ սոյն գումարին մէկ երրորդը, մինչեւ 100,000 անգլ. ոսկի, մինչ հայկական համայնքներուն կը մնայ ապահովել մնացեալ 200,000 անգլ. ոսկին:

Կը նախատեսուի որ վերանորոգութեան աշխատանքները պիտի տեսնեն 6 տարի: Իւրաքանչիւր տարի Հիմնարկութիւնը վերանորոգութեան գործին պատասխանատուներուն տրամադրութեան տակ պիտի դնէ 16,666 անգլ. ոսկիի գումարը, զոր պիտի վճարէ հայկական բաժնին տնտեսումին սահմանուած մասնաւոր հաշուի մը:

Անմիջապէս որ պաշտօնապէս սկսին Ս. Յարութեան Տաճարին բուն վերանորոգութեան աշխատանքները, համաձայն երեք կրօնական Համայնքներու քաջայայտ հաւանութեամբ կազմուած շինարարական ծրագրին, Հիմնարկութիւնը յանձնառու կ'ըլլայ երուսողէմի Հայոց Պատրիարքարանին տրամադրութեան տակ դնելու 100,000 անգլ. ոսկիի գումար մը, վեց տարուան վրայ հաւասարապէս բաժնուած, ըստ հետեւեալ պայմաններուն.

1. — 16,666 անգլ. ոսկիի առաջին տարեվճարը պիտի տրամադրուի, մինչև սոյն գումարին թափումը, հետզհետէ հատուցանելով այն հաշուեցոյցները եւ վճարման պահանջները զորս պիտի ներկայացնէ ճարտարագիտական գրասենեակը, որուն յանձնուած է Համայնքներուն համաձայնութեամբ գործադրուող աշխատանքներուն պատասխանատուութիւնը:
2. — Աշխատանքներուն պաշտօնական սկզբնաւորութենէն տարի մը վերջ, հաշուական վաւերագիրներու հիման վրայ հաստատագիր պիտի ներկայացուի Հիմնարկութեան թէ հայկական տարեկան բաժնին 2/3ը, այսինքն 33,333 անգլ. ոսկի, հանգանակուած է: Այն պարագային որ նախատեսուած 6 տարիներէն մէկուն վերջաւորութեանը ի յայտ կու գայ որ հայկական բաժնին 2/3ին հանգանակութիւնը չէ իրականացած, Հիմնարկութիւնը պիտի կախակայէ իր վճարումը յաջորդող տարեշրջանին համար, մինչև որ պակսող գումարները գործնականապէս գոյանան:

Այսպէս Հիմնարկութիւնը նախաձեռնարկ կ'ըլլայ օրինակը տալու եւ սկզբնական գումարը տրամադրելու, այն հաստատ համոզումով որ հայկական բոլոր համայնքները պիտի պատասխանեն իրենց ուղղուած կոչին: Իւրաքանչիւր Հայ կատարեալ գիտակցութիւնը պիտի ունենայ իր պարտականութեան որ է մասնակից ըլլալ իր եկեղեցոյն շնորհուած նուիրական իրաւունքներուն պաշտպանութեան գործին եւ զօրավիգ ըլլալ յաւերժացնելու Ս. Տեղեաց պահպանութեան դարաւոր դերը որ իր եկեղեցիին վիճակուած է: Անկախաբար այն աովորական օժանդակութենէն զոր իր ստեղծումէն ի վեր կ'ընծայէ Երուսողէմի Հայոց Պատրիարքարանին, Հիմնարկութիւնը չվարանցաւ, ի յիշատակ իր Հիմնադրին, այսքան կարեւոր մասնակցութիւն մը բերելու առեականացմանը համար այն հաւատքի եւ քաղաքակրթութեան գործին զոր հայ ազգը կը կատարէ այս առբը վայրերուն մէջ դարերէ ի վեր: Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը այդ վստահ է որ հայ ժողովուրդը ցոյց պիտի տայ միեւնոյն ջերմեանդ նուիրումը ազգործին եւ միեւնոյն հաւատարմութիւնը այդ յիշատակին, լիովին պատասխանելով Ա. Մինայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.ի կոչին որ կը ճրարէր «Գրիստոնեայ հայ ժողովուրդը» այս առիթով ալ ապացոյցը տալու «հոգեւոր ազգային միասնութեան եւ զոհարելութեան ու շինարար ոգիին»:

Լիզպոն, 15 Օգոստոս 1962

ԴԱՆՈՒՍ ԿԻԼԴԵՆԿԵԱՆ, ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ